Հ. Մ. ԵԴԱՆՑԱՆ

«ԽԱԼԻՍԵՆ» ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

XIX դարի երկրորդ կեսին Իրանում դեռևս նշանակալի տարածություն էին կազմում պետությանը պատկանող հողերը կամ խալիսեն։ Խալիսե հողատիրությունը Իրանում գոյություն ուներ դեռ վաղ ժամանակներից, բայց այն միշտ փոփոխության մեջ էր։ Որոշ ժամանակաշրջանում նրա տարածությունը աճել, իսկ մի այլ դեպքում՝ նվազել է։ Խալիսեները իրենց ծագումով նույնպես տարբեր էին, նայած թե ինչ պայմաններում և ինչ աղբյուրներից էին նրանք անցել պետությանը։ Խալիսե հողերի ծագումը կամ նրանց տարածության ստույգ չափը երբեմն հայտնի չէր մինչև իսկ պետությանը։ Տարբեր ժամանակներում եղել են խալիսե հողերի գրանցումներ և կազմվել տարբեր ցուցակներ ու մատյաններ, որոնք ինչ-որ չափով արտացոլել են խալիսե հողերի վիճակը։ Այդպիսի ցուցակներ կազմվեցին նաև Նասր էդ Դին շահի (1848—1896) օրոք, որոնք պահպանվելով արխիվներում՝ աղբյուր են հանդիսանում խալիսե հողերի հարցին տարբեր առիթներով անդրադառնալու ժամանակ։ Վերոհիշյալ ցուցակներում մի քանի ձևի խալիսեներ են նշվում, որոնք հետագայում ևս օգտագործվել են ֆինանսների մինիստրության կողմից։ Դրանք են.

1. «Խալիսեջաթե էնթեղալի» կամ փոխանցելի խալիսեներ։ Սրանք այն խալիսեներն էին, որոնք պետության կողմից տրվել էին առանձին անձանց և ենթակա էին փոխանցման նրանց ժառանգներին, բայց ոչ որևէ երրորդ անձանավորության։ Իսկ դա եղել էր այնպես, որ խալիսե հողերի ընդհանուր անկման պայմաններում Նասր էդ Դին շահի մինիստր Ամին էս Սոլթանը գալիս է այն եզրակացության, որ նշված կալվածքները ավերումից փրկելու համար նպատակահարմար կլինի դրանք փոխանցել առանձին անհատների տնօրինմանը, փոխանակ նրանց տալու այդ կալվածքների եկամուտները ստանալու իրավունքը։ Փոխանցումների համար նա համապատասխան հրովարտակներ հրապարակեց և կալվածքների հարկերը բարձրացրեց, որը գնահատվում էր բնամթերքով, իսկ հետո փոխադրվում կանխիկ գումարի։ Դա կոչվում էր «Թասիր»։ Այդ գումարներից որոշ պակսեցումներ թույլատրվում էին հատուկ նպատակների, ինչպես օրինակ ստորերկրյա ջրանցքների կառուցման համար և այլն։ Ահա հենց այս խալիսեներն էին, որ հայտնի դարձան «Խալիսեջաթե էնթեղալի» անունով։

Նոր կարգի համաձայն այդ հողերը կարող էին ժառանգվել, բայց վաճառվել չէին կարող։ Այստեղ հետաքրքրական է նշել նաև այն, որ պետությունը միշտ էլ կարող էր այդ կալվածքներից որևէ մեկը հետ պահանջել, դրա համար էլ նրանց արժեքը, ընդհանրապես, ավելի ցածր էր նշանակվում, քան սրբարի կալվածքներինը։

Այսպիսով, խալիսեջաթե էնթեղալին կամ խալիսեջաթե վագոզարին այն հողերն էին, որ տրվում էին որպես ոչ լրիվ սեփականություն, այսինքն՝ դրանք

կարելի էր փոխանցել, բայց չէր կարելի վաճառել, չնայած որ հետագայում հատուկ ֆիրմանով թույլատրվեց նաև դրանց վաճառքը։

Էնթեղալի հողերից ստացված եկամուտների պետական բաժինը մեծ էր, երբեմն հասնում էր մինչև 70 տոկոսի, ուստի նրանց տերերը մեծ ջանքեր չէին թափում այդ հողերի բարեկարգման համար[1]։

2. «Խալիսեջաթե զարթի» կամ բռնագրավված խալիսներ։ Սրանք այն խալիսներն էին, որոնք նախկինում պատկանել են պետությանը դեմ ապըստամբած կամ պետական հարկերը չվճարած խաներին, իսկ հետագայում գավթվել ու մտցվել են դիվանի խալիսների ֆոնդը։ Օրինակ, Թեհրանում, Գիլանում, Երուշերդում և Խարում շատ հողեր ունեցող Ասաֆ էդ Դոլեի մոտ 50 գյուղերը բռնագրավվեցին և համարվեցին խալիսեյի զարթի[2]։ Պատահում էին նաև դեպքեր, երբ որոշ ժամանակ հետո այդ հողերը վերադարձվում, կամ ավելի շուտ վաճառվում էին նախկին տերերին, բայց դրանք շարունակում էին մնալ խալիսների ցուցակներում[3]։ Լամբտոնը գրում է, որ Նասր էդ Դին շահի թագավորության սկզբում Իսֆահանի շրջակայքում մոտ 1000 հողակտորներ կային։ Դրանց մի մասը մասնավոր էր, մի մասը վակֆային, իսկ մնացածը խալիսե, որոնք համարյա չէին մշակվում[4]։ Ֆինանսների մինիստր Միրզա Արդոլ Հոսեյնին տրվեց 14.000 թուման կանխիկ և 1000 խարվար բնամթերք, որպեսզի նա հետ վերցնի այդ հողերը։ Վերջինս այդ գումարը օգտագործեց գինվելու և կառավարության դեմ ապստամբելու համար։ Ապստամբությունը ճնշվեց, իսկ նրա մասնակից մի շարք մարդկանց կալվածքները բռնագրավվեցին և մտցվեցին խալիսեի մեջ։ Չնայած այդ կալվածքների տերերը որոշ ժամանակ անց հետ վերցրեցին իրենց կալվածքները, սակայն դրանք շարունակվեցին դրանցվել որպես խալիսեջաթե զարթի՝ այսինքն բռնագրավված խալիսներ։ Այդ իրադարձություններից որոշ ժամանակ անց Միրզա Արդոլ Վահաբը նորից անդրադարձավ Իսֆահանի հողերին և դրանք բաժանվեցին երկու կարգի՝ վակֆային խալիսների և արբաբի խալիսների[5]։

3. «Խալիսեջաթե բաղրի» կամ սերմացուի խալիսներ։ Ղաջարների թագավորության օրոք Իրանում հաճախ սով էր լինում, որի հետևանքով կալվածատիրական շատ գյուղեր քայքայվում էին։ Պետությունը ստիպված եղավ այդ գյուղերի գյուղացիներին սերմացու տալ, որպեսզի նրանք վերսկսեն հողի մշակությունը, պայմանով, որ բերքը ստանալուց հետո ստացած սերմացուն վերադարձնեն։ Այդ գյուղերի տերերից ոմանք, վիճակը բարելավվելուց հետո, վերադարձան և իրենց գյուղերին տեր կանգնեցին, իսկ շատ կալվածատերեր,

---

[1] مسعود کیهان جغرافیای مفصل ایران طهران ۱۳۱۱ جلد سوم صفحه ۸۵

[2] تقی بهرامی تاریخ کشاورزی ایران طهران ۱۳۲۰ صفحه ۱٤۵

[3] انصاری تاریخ اصفهان و ری اصفهان ۱۳۲۲ صفحه ٤۷

[4] Պատահում էին դեպքեր, երբ մի գյուղի տարբեր մասերը կալվածատիրական էին, խալիսե կամ վակֆային։ ЦГВИА, ф. 76, д. 213, л. 4—8. օրինակ, 1880—81 թթ. Ղարաղանում մի գյուղի մեկ երրորդը խալիսե էր, կամ մեկ ուրիշ գյուղի կեսը, մյուսի՝ մի երրորդը կամ մեկ վեցերորդը վակֆային։ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 156.

[5] A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 152—153.

զանազան պատճառներով չվերադարձան և նրանց գյուղերը անցան պետությանը ու կոչվեցին «սերմացուի խալիսներ»[6]։ Դա առաջին անգամ սկսվեց Մոհամեդ շահի օրոք Իսֆահանում, երբ սովը վերջանալուց հետո հողերը վերադարձվեցին տերերին, բայց մնացին խալիսների ցուցակներում[7]։ Լամբտոնը նշում է, որ երբ 1869—1872 թթ. մի քանի իրար հաջորդող սովի տարիներ եղան, մեծ թվով խալիսն և արբարի հողեր նորից ամայացան, բազմաթիվ հողատերեր պարզապես լքեցին իրենց հողերը, որոնք և մտան խալիսի ֆոնդի մեջ[8]։

4. «Խալիսեջաթե սարթի», կամ գրանցված խալիսներ։ Սրանք այն հողերն էին, որ պետությանը չէին պատկանում, բայց քանի որ գրանցված էին դեռևս Նադեր շահի ժամանակ կազմված «Ռազարեյն Նադերի» ցուցակում, ուստի պետությունը այդ հողերը համարում էր խալիսն, չնայած գտնվում էին մասնավոր մարդկանց տնօրինության ներքո[9]։

Բացի խալիսի այս չորս ձևերից, աղբյուրները նշում են նաև «Խալիսեյն սահիբեյն դիվանի» ձևը։ Այս հողերը տրվում էին մորաշիրներին, առանձին մարդկանց[10]։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ղաջարների օրոք խալիսների վիճակը շահերի փոփոխման հետևանքով անկայուն էր։

Ընդհանրապես պետք է նշել, որ դեռևս XIX դ. երկրորդ կեսին պետությանը կամ շահին պատկանող հողերի սահմանազատումը դժվար էր։ Այդ բանը միայն առաջին և երկրորդ մեջլիսների (1906—1911 թթ.) ժամանակ կատարվեց[11]։

Ֆաթհ Ալի շահի մահից հետո խալիսների վիճակը այնքան անորոշ դարձավ, որ կառավարությունը չէր իմանում նրանց քանակը, որովհետև բոլոր մատյանները և փաստաթղթերը ոչնչացել էին։ Իրանական շահերը միջոցների էին դիմում այդ հարցում պարզություն մտցնելու համար։ Հենց այդ պատճառով էլ Նասր էդ Դին շահի և Մոզաֆար էդ Դին շահի օրոք նույնպես խալիսն հողերի ցուցակները կազմվեցին[12]։

Այդ տեսակետից հետաքրքիր է հետևյալ փաստը. Մոհամեդ շահի ժամանակ Մեծ վեզիր Հաջ Միրզա Աղասին 1841 թ. մի հրովարտակ է հրապարակում հետևյալ բովանդակությամբ։ Նախ՝ բոլոր այն խալիսները, որոնք գրանցված էին մատյաններում և արբարի չէին, պետք է ճանաչվեին որպես խալիսն կալվածքներ։ Երկրորդ՝ այն նախկին խալիսները, որոնք արդեն արբարի էին դարձել, խալիսի մեջ չպետք է մտնեին։ Երրորդ՝ Աղա Մոհամեդ խանի և Ֆաթհ Ալի շահի այն բռնագրաված հողերը, որոնք ժառանգներ ունեին, պետք է համարվեին արբարի։ Բայց պետությունը այդ հողերը չէր տալիս նրանց, այլ

---

6 احمد هومن اقتصاد کشاورزی جلد اول تهران ۱۳۳٤ صفحه ۲۷۹

7 انصاری... صفحه ۷٦

8 A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 152—153.

9 Նույն տեղում։

10 انصاری... صفحه ۷٦

11 مرتضی حسینی تهرانی، اصول علم مالیه و قوانین مالی ایران تهران ۱۳۳٤ صفحه ۱۸۵

12 احمد هومن... صفحه ۲۸۱

դրանց դիմաց վճարում էր դումար։ Հորրորդ՝ բոլոր այն խալիսաները, որոնք գրանցված էին կամ գրանցված չէին, հավակնորդ ունենալու դեպքում պետք է տրվեին նրանց և խալիսա չհամարվեին։

Այս հրովարտակը վերաբերում էր խալիսա բոլոր գյուղերին, որոնք ցրված էին Թեհրանի, Իսֆահանի, Ադրբեջանի, Քերմանի, Ֆարսի, Մազանդարանի, Արաբստանի, Խամսեի, Մալայերի, Համադանի, Աստրաբադի, Սավեի, Գիլանի, Զազվինի, Քերմանշահի, և մասամբ էլ Բորուջերդի, Լորեստանի, Քուրդիստանի, Գոլիսյեզդանի, Խոնսարի և այլ նահանգներում ու շրջաններում[13]։

Քերզոնը այն կարծիքն է հայտնում, որ խալիսա հողերը Իրանում մեծ մասամբ «անցած դարի քաղաքացիական, ներքին կռիվների ծնունդ էին»[14]։

Դա մասամբ ճիշտ է, բայց մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արբարի հողերի բռնագրավման և խալիսա հողերի ֆոնդի մեջ մտնելու փաստերի էլ կարելի է հանդիպել։ Պատահում էին դեպքեր, երբ հողատերերը ի վիճակի չլինելով բավարարել պետական պաշտոնյաների պահանջները, նրանց հողերը բռնագրավվում և դառնում էին խալիսա։ Այդպիսի բռնագրավումները երբեմն կատարվում էին դեկրետով։ Օրինակ՝ արխիվներում պահպանվել են Նասր էդ Դին շահի օրոք Իսֆահանի նահանգապետ Զիլ էս Սոլթանի դեկրետները, որոնք արբարի հողերը հայտարարել են խալիսա[15]։

Էդվարդ Սթեյքը «Վեց ամիս Պարսկաստանում» գրքում, որը հրատարակվել է 1882 թ., գրում է, որ արբարի հողերը կարելի էր առնել և ծախել, ինչպես ամեն մի ունեցվածք։ Բայց, արդյո՞ք պետությունը երբեմն դիվանի հողերը վաճառում էր մասնավոր անձանց, թե ոչ, «մի հարց էր, որի համար ես չկարողացա բավարար պատասխան ստանալ։ Բայց անկախ այն բանից, թե դիվանի հողերը կարող էին արբարի դառնալ թե ոչ, գոյություն ուներ մշտական տենդենց արբարի հողերը դիվանի դարձնելու ուղղությամբ՝ բռնագրավման կամ այլ և այլ եղանակներով»[16]։

Սա, իհարկե, միակողմանի գնահատական է, քանի որ փաստերը ցույց են տալիս, որ տեղի էր ունենում նաև խալիսա հողերի վաճառք՝ մասնավոր անձանց։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Զաջարների թագավորության շրջանում, հատկապես Աղա Մոհամեդ խանի և Մեծ վեզիր Հաջի Միրզա Աղասու օրոք, խալիսա գյուղերը շատացան։ Որոշ վակֆային կալվածքներ ևս, որոնք որոշակի նշանակում չունեին, զավթվեցին պետության կողմից և մտցրվեցին խալիսաի ֆոնդի մեջ[17]։ Նասր էդ Դին շահը իր թագավորության սկզբնական շրջանում խալիսա կալվածքները ընդարձակեց, բայց վերջում սկսեց դրանք բաժանել։ Գյուղերը սկսեցին ավերվել և գյուղացիները մասսայաբար հեռացան խալիսա գյուղերից։ Օրինակ՝ Նահավանդի և Խազալի շրջանների մասին 1880 թ. զեկուցագրում ասված է, որ այնտեղ կային 13 լրիվ խալիսա և 4 մասամբ խալիսա գյուղեր։ Այդ գյուղերից երեքը միանգամայն քայքայված

13 تقی بهرامی... صفحه ۱٤۹

14 J. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, London, 1892, p. 486.

15 A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 154.

16 E. Stack, Six months in Persia, vol. II, London, 1882, p. 247.

17 مرتضی حسینی تهرانی... صفحه ۱۲٤

վիճակում էին[18]։ Իրանի ֆինանսների մինիստրության արխիվներում պահպանված 1878 թվակիր մի զեկուցագրում խարի և Թեհրանի շրջակայքի մասին նշված է, որ Իրանի գյուղերի մեծ մասը, անկախ այն բանից թե նրանք խալիսի էին կամ արբարի, անկման վիճակում էին։ Այդ զեկուցագրում նշված է նաև այն փաստը, որ արբարի կալվածքները համեմատաբար լավ վիճակում էին, քան խալիսի կալվածքները[19]։ Էթեմադ Էս Սալթանեն նույնպես նշում է, որ հսկողության բացակայության և վատ կառավարման հետևանքով պետական շատ կալվածքներ ավերվել էին[20]։

Պետության կողմից վարձով տրված հողերն էլ առանձնապես չէին ծաղկում, քանի որ վարձակալները կապիտալ ներդրումներ չէին կատարում, այլ ձգտում էին առավելագույն օգուտներ քաղել, որի հետևանքով էլ հողերը ուժասպառ էին լինում։

Այս ամենի պատճառով 70—80-ական թվականներին խալիսի հողատիրությունը, որպես հողատիրության ձև, անկում էր ապրում։ Այդ պրոցեսի առաջն առնելու նպատակով և մեծ գումարների կարիք զգալով՝ նասր էդ Դին շահը սկսեց խալիսները վաճառել։ Ստեղծվեց «վեղարաթի խալիսեջաթ» կոչվող մինիստրությունը, որը փաստորեն միջնորդի դեր էր կատարում, երբ խալիսի հողերը վաճառվում էին կամ տրվում որպես թիուլ։ Խալիսի հողերի վաճառքի մասին է խոսում նաև Ջամալ Զադեն, որը գրում է, թե պետությունը գրամի կարիք զգալով 1876 թ. սկսած որոշեց վաճառել խալիսները[21]։ Դիվանի կալվածքները և հողերը ունևոր և հարուստ մարդկանց վաճառվեցին և համապատասխան փաստաթղթեր տրվեցին[22]։

Խալիսի վաճառքի փաստաթղթերը ստորագրում էր ինքը՝ շահը։ Նահանգապետները միայն միջնորդի դեր էին կատարում, երբեմն էլ իրենց պաշտոնը օգտագործելով՝ էժան գնով հող էին ձեռք բերում։ Պատահում էին նաև դեպքեր, երբ նահանգապետները էժան գնած խալիսները վաճառում էին ավելի բարձր գնով։ Անսարին գրում է, որ նման ֆիրմաններ ձեռք բերելու համար կատարված ծախսերը, կաշառքները և այլն գնալով աճել էին 10, մինչև իսկ 20 անգամ[23]։ Նա նշում է, որ սկզբում խալիսները գնում էին ավելի ցածր խավերի ներկայացուցիչները, բայց երբ հողի եկամտաբերությունը բարձրացավ, արքայազնները և մեծամեծները նույնպես մասնակից դարձան այդ մրցավազքին[24]։ Այսպես, Աստրաբադում խալիսի հողեր էր գնել նասր էս Սալթանեն, որը 1900 թ. արդեն այդ կալվածքների մեծ մասը իր սեփականությունն էր դարձրել[25]։ Նույնը կարելի է ասել և Շիրազի շրջանի մասին, որտեղ խալիսի

---

18 A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 156.

19 Նույն տեղում, էջ 152.

20 محمد حسن خان اعتماد السلطنه كتاب المآثر والآثار طهران ١٣٠٢ صفحه ١٣٠

21 محمد على جمال زاده گنج شايگان يا اوضاع اقتصادى ايران برلين ١٣٣٥ صفحه ١٣٨

22 تقى بهرامى... صفحه ١٤٦

23 انصارى... صفحه ٦٩

24 Նույն տեղում, էջ 62։

25 ЦГВИА, ф. 76, д. 241, л. 6.

հողերի մեծագույն մասը անցել էր մասնավոր անձանց ձեռքը։ Այդ նույն պրոցեսը տեղի ունեցավ Մարվի շրջանում։ 1899-ին Կոսոգովսկին հաղորդում էր, որ Էղբալ էս Սալթանեն և Մոհամեդ փաշան գնել էին Մարվի խալիսե կալվածքները[26]։

Թեհրանի հյուսիս-արևմտյան մասում գտնվող Սավեյի գավառում մոտ 300 գյուղ նախկինում պատկանում էր պետությանը, բայց XX դարի սկզբներին դրանց չորս-հինգերորդը արդեն յուրացվել էին կալվածատերերի կողմից[27]։

Խալիսե հողերի վաճառքի մասին այս հրամանից մի քանի տարի հետո Գիլանի եկամուտի մասին կազմված գրքույկում ցույց է տրված, որ շահի կողմից անցյալում բռնագրավված և խալիսե դարձած հողերի վաճառքի հետևանքով, Գիլանում խալիսե էր մնացել ընդամենը երկու գյուղ։ Այդ հողերը ժամանակին պատկանել են Գիլանի նահանգապետ Մաջդ էդ Դոլեին, իսկ այժմ վաճառվել էին նրա որդուն՝ Էմջադ էդ Դոլեին[28]։

Այսպիսով, Նասր էդ Դին շահի թագավորության վերջում մեծ քանակությամբ խալիսե գյուղեր, հատկապես Իսֆահանի շրջանի խալիսեները, ամբողջովին վաճառվեցին, և մեծ թվով մարդիկ հողեր գնեցին պետությունից։ Անսարին գրում է, որ խալիսեները մեկը մյուսի ձեռքից խլում էին և միմյանց ծախում։ Պատահում էին դեպքեր, որ տասը տարվա ընթացքում նույն գյուղը հինգ անգամ ձեռքից ձեռք էր անցնում[29]։

Մոզաֆար էդ Դին շահի ժամանակ էլ վիճակը նույնն էր։ Շահը հրամայեց խալիսեների վաճառքը շարունակել և կազմել մի ցուցակ, որի մեջ պետք է նշվեին այդ հողերի քանակը և յուրաքանչյուրի գինը։ Պետական պաշտոնյաները և ազդեցիկ անձինք ցուցակը կազմելիս չարաշահումներ կատարեցին և մի շարք սեփական հողեր նույնպես մտցրին ցուցակի մեջ։

Թաղի Բահրամին նշում է, որ Մոզաֆար էդ Դին շահը հեռավոր և քայքայված կալվածքները վաճառելու փոխարեն, անգործունյա և ապիկար մարդկանց էժան գնով վաճառեց քաղաքների մոտակայքում գտնվող ընտիր և բարգավաճ կալվածքները, որի հետևանքով էլ այդ խալիսեները լրիվ քայքայվեցին և ավերվեցին[30]։ Այս շահի ժամանակ էր, որ Խուզիստանի համարյա ամբողջ խալիսեները վաճառվեցին մասնավոր անձանց[31]։

Խալիսե հողերի վաճառքը տեղի էր ունենում պետության համար աննպաստ պայմաններում։ Այդ հողերը վաճառվում էին չնչին գումարների դիմաց։ Երբեմն էլ դրանք հատկացվում էին առանձին մարդկանց, որոնք հետո յուրացնում էին։ Օրինակ, Մոզաֆար էդ Դին շահը Ղազվինի և Զանջանի միջև ընկած Սիահդոհոնը, որը ուներ մոտ 2000 ծուխ և տարեկան 2000 հազար թուման կանխիկ գումար, 1000 խարվար ցորեն և 456 ման տարման հարկ էր տալիս, հանձնեց պալատական մի բարձր պաշտոնյայի։ Իսկ նա, ինչպես և շատ ուրիշներ, տարբեր պատրվակներով, աստիճանաբար հարկերը իջեցրին, մինչև

26 Նույն տեղում, գ. 374, թ. 3։

27 Атрпет, Мамед Али шах, Александрополь, 1909, стр. 44.

28 ЦГВИА, ф. 76, д. 361, л. 107.

29 انصاری... صفحه ۳—۸۲

30 تقی بهرامی... صفحه ۱۴۸

31 شمس الدین جزایری قوانین مالیه تهران ۱۳۳۵ صفحه ۶۳

լրիվ յուրացրին այդ հողերը[32]։ Այսպիսի դեպքերի մասին բավմաթիվ վկայություններ կան տարբեր սկզբնաղբյուրներում։

Խալիսն կալվածքների պատմության տեսակետից հետաքրքիր են 1324 թ. (1806) Շիրազի իրադարձությունները։ Մոզաֆար էդ Դին շահի որդիներից Շոա էս Սալթանեն Ֆարսի նահանգապետն էր։ Վերջինս պետությունից շնչին զումարով գնեց Ֆարսի խալիսն կալվածքները, որից հետո սկսեց յուրացնել Շիրազի խալիսները։ Նա գրավեց նաև Նասր էդ Դին շահի ժամանակ առանձին դեպքերում գյուղացիներին վաճառված խալիսները։ Խալիսների այս գնումները աստիճանաբար հասցրին այն բանին, որ պաշտոնյաները սկսեցին ոտնձգություններ անել նաև կալվածատերերի սեփականությունների նկատմամբ։ Եթե որևէ կալվածատեր սեփականագիր չուներ, ապա նրա հողերը ամբողջապես յուրացվում էին, իսկ եթե նման փաստաթուղթ ուներ, ապա նախ այդ սեփականագիրն էին առնում նրա ձեռքից, իսկ հետո յուրացնում նրա կալվածքը։ Այս ոտնձգությունները մեծ դժգոհություն պատճառեցին և խլրտումներ առաջացրին[33]։

Կիրառվում էր նաև այն պրակտիկան, երբ պետությունը իր իրավունքները վերականգնում էր այս կամ այն հողի նկատմամբ, այն պայմանով, որ այդ նույն հողը կարող էր հետո տալ մեկ ուրիշի՝ սեփականության իրավունքով։ Բայց ոչ միշտ էր դա հաջողվում։ Այսպես, օրինակ, 1870-ական թվականների վերջին Կողաթլոյի շրջանի մի ամբողջ ցեղ չդիմանալով վարչական մարմինների ճնշումներին և կորզումներին՝ լքեց իր զբաղեցրած շրջանը և իր խաների հետ միասին գաղթեց Ռուսաստան։

Նրանց հողերը «մնացին աղատ», բայց ոչ ոք այնտեղ չէր վերարնակվում, քանի որ այդ շրջանի պետական հարկերի պաշտոնական չափերը մինչևիսկ, կազմում էին 1200 թուման դրամով և 1700 խարվար ցորեն բնամթերքով, որն անշուշտ շատ ծանր էր և ոչ ոք իր վրա վերցնել չէր կարող։ Մի քանի տարի հետո Արդաբիլի նոր նահանգապետը Կողաթլու ցեղի գեկավարների հետ բանակցության մեջ մտավ, որպեսզի նրանք վերադառնան իրենց նախկին հողերը, առաջարկելով պակասեցնել պետական հարկերը մինչև 730 թուման դրամով և 1300 խարվար բնամթերքով[34]։

Աղբյուրները վկայում են նաև հետևյալ միջոցառումների մասին։ Խալիսն հողերի տնօրինողները երբեմն իրենց իշխանությունը չարաշահում էին ոչ միայն իրենց տնօրինության տակ եղած կալվածքների յուրացման, այլև հարևան կալվածատերերի հողային սեփականությունները գավթելու և իրենց հողային հարստությունները մեծացնելու տեսակետից։ Նասր էդ Դին շահի թագավորության տարիներին խալիսն հողերի կառավարիչների կամ, ինչպես նրանց անվանում էին, մորաշիրների ոտնձգությունների և յուրացումների առաջն առնելու համար, որոշեցին այդ հողերը հանձնել մորաշիրներին՝ վեր-

---

32 جمال زاده... صفحه ۱۳۸

33 ناظم الاسلام کرمانی تاریخ بیداری ایرانیان مجلد اول تهران صفحه ۳۳۰

34 Л. Ф. Тигранов, Из общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 4.

ջին երեք տարիների եկամուտների միջին չափի դիմաց, անկախ այն բանից թե դա կկազմեր մեկ տարվա եկամուտից ավելին կամ պակաս։ Այդ որոշակի գումարը յուրաքանչյուր տարի մորաշիրը պետք է վճարեր պետությանը։ Այս կարգը շարունակում էր գոյություն ունենալ մինչև 1928 թ., երբ հատուկ օրենքով այդ հողերը համարվեցին արքարի և դարձան մասնավոր սեփականություն[35]։

Ինչպես տեսնում ենք, սա նույնպես պետական հողերը վաճառելու կամ մասնավոր սեփականություն դարձնելու եղանակներից մեկն էր, որը որոշ տարածում էր գտել XIX դարի երկրորդ կեսին։

Ղաջարական դինաստիայի թագավորության տարիներին երկրի մշակելի հողերի ընդարձակ տարածություններ շահերի ցանկությամբ տրվեցին որպես թիուլներ։ Պետական պաշտոնյաները, վաղիրները, նայիբները, հաքեմները և ուրիշներ ընդարձակ թիուլներ էին ստանում։ Թիուլներից շոշափելի բանակ տրվում էր նաև շահի ընտանիքի անդամներին։ Օրինակ՝ Խորասանի նահանգի նիշարուրը տրվել էր արքայազն Նայիբ էդ Դոլեին[36]։ Այդ տարիներին հատկապես լայն տարածում էր գտել տարեկան ռոճիկի դիմաց առանձին պաշտոնյաներին տրված թիուլը։ Թիուլի այդ ձևը ավելի մեծ տոկոս էր կազմում, քան մյուս ձևերը։ Մյուս կողմից, թիուլդարները ձգտում էին իրենց թիուլները դարձնել մշտական և փոխանցելի, պետության միջամտությունը թիուլի ներքին գործերին նվազագույնի հասցնել և փաստորեն նրանց տերերը դառնալով, կարողանալ, որպես ժառանգություն, փոխանցել իրենց հաջորդներին[37]։ Բերարը անդրադառնալով զաջարների կողմից այդպիսի առատությամբ թիուլներ տալու փաստին, նշում է, որ զաջարները վերջին հարյուրամյակի ընթացքում բաժանելով թիուլները գրկվեցին իրենց նվաճումների ավելի քան կեսից և հողային եկամուտների ավելի քան երկու երրորդից։

Չնայած թիուլները ժառանգաբար փոխանցվում էին, սակայն պատահում էին նաև դեպքեր, երբ դրանք տրվում էին ուրիշի։

Ժամանակավորապես օգտագործման տրված կալվածքները կամ թիուլները դեռևս XIX դարի երկրորդ կեսին հսկայական տարածություն էին կազմում։ Հողային այդպիսի հատկացումները, բնականաբար, ուժեղացրեցին ազնվականությանը, բարձրացրեցին նրանց տնտեսական հզորությունը, որը իր հետ բերեց շահից ունեցած կախվածության նվազում և կենտրոնական իշխանության թուլացում։

Ուրեմն պարզորեն նկատվում էր, որ նոր պայմաններում թիուլային հողատիրությունը այլևս իրեն չէր արդարացնում և բնականաբար այն իր տեղը պետք է դիջեր մասնավոր հողատիրությանը կամ մյուլքադարությանը, մի պրոցես, որն իսկապես տեղի ունեցավ XIX դարի երկրորդ կեսին։

Այստեղ, իհարկե, պետք է անել հետևյալ վերապահությունը։ Չնայած XIX դարի վերջերին թիուլդարներից շատերը փաստորեն արդեն այդ կալվածք-

---

35 مصطفی هروی تحولات قوانین مالیات بر درآمد ایران تهران ۱۳۳۳ صفحه ۳۸

36 احمد هومن... صفحه ۹—۲۷۸

37 В. Берар, Персия и персидская смута, 1912, стр. 260.

ների մասնավոր սեփականատերերն էին, սակայն, իրավական տեսակետից շարունակում էին գոյություն ունենալ որոշ սահմանափակումներ։ Հենց այդ պատճառով էլ խալիսեների վաճառքի ժամանակ շատ թիուլդարներ էժան գնով իրենց տրամադրության տակ եղած հողերը գնեցին, որպեսզի լրիվ սեփականատերեր լինեն[38]։

Թիուլների հանձնման գործում էլ կարելի էր նկատել այսպիսի փոփոխություն։ Եթե XIX դարի առաջին կեսին թիուլը, որպես պետական ոռճիկ, տրվում էր իշխաններին, հոգևորականներին, պետական պաշտոնյաներին, կամ ինչոր ծառայության դիմաց, ապա XIX դարի երկրորդ կեսից սկսած թիուլ կարող էր ստանալ նա, ով ավելին կվճարեր։ Հասկանալի է, որ նոր պայմաններում հողային սեփականությունը տալիս էր մեծ եկամուտներ, ուստի ունևոր խավի տարբեր ներկայացուցիչները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում ու կաշառքի և այլևայլ եղանակներով լայնատարած թիուլներ էին ձեռք բերում։

Կորսունը խոսում է Ադրբեջանի թիուլդարների մասին։ Նա նշում է, որ Երբեմն ամբողջ մահալի գյուղերը տրվում էին որպես թիուլ։ Օրինակ՝ 1900 թ. Մեշրինի մահալի բոլոր 118 գյուղերը տրվել էին որպես թիուլ[39]։ 1898 թ. որոշ տվյալների համաձայն Թեհրանի մոտակայքում գտնվող Ամինաբաղ գյուղը Մեծ վեզիր Ամին էս Սոլթանի, Մահմուդ Արաղ գյուղը պալատի գաղտնի գործերի վերակացու Նազեմ խալվաթի, Ֆերնաբաղ գյուղը շահի գլխավոր խոհարարի թիուլներն էին[40]։ Իրանի ֆինանսների մինիստրության արխիվներում պահպանված մի ցուցակի համաձայն, որը կազմված է 1878—1879 թթ., Զանջանում և նրա շրջակայքում 800—900 գյուղեր համարվում էին թիուլային[41]։

Ինչպես ասացինք, չնայած պետության կողմից տրված այդ կալվածքները շարունակվում էին կոչվել թիուլ, սակայն նոր պայմաններում թիուլդարները փաստորեն այդ հողերի տերն ու տնօրենն էին։ Այդ հողերը պետությունից ստանալով նրանք սկզբից ևեթ նպատակ էին հետապնդում դրանք յուրացնել։ Այսինքն՝ թիուլներ ձեռք բերելը դառնում է խոշոր կալվածատերերի ձեռքում հողային սեփականություններ կենտրոնացնելու եղանակներից մեկը։ Այս հանգամանքը սկզբում որոշ չափով անհանգստացնում էր պետությանը, որը այդպիսով զրկվում էր իր եկամուտներից։

Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ 1871 թ. Իրանի կառավարությունը վարչական բարեփոխման մի նախագիծ էր մշակել, որը սկզբում պետք է գործադրվեր Ադրբեջանում։ Այդ նախագիծը շոշափում էր նաև թիուլների հարցը։ Ըստ այդ նախագծի, թիուլները պետք է դրվեին պետության հսկողության տակ։ Բնական է, որ դա մեծ դժգոհություն առաջացրեց թիուլդարների մեջ, քանի որ այդպիսով նրանք կդադարեին թիուլների մասնավոր տերերը լինելուց և կզրկվեին իրենց խոշոր եկամուտներից։ Հետաքրքրական է նշել, որ գյուղացիներն էլ առանձնապես գոհ չէին այդ նախագծից, քանի որ նրանք պարզորեն տեսնում էին երկու տերերի կողմից շահագործվելու հե-

38 Л. Ф. Тиграиов, Из общественно-экономических отношений в Персии, Тифлис, 1905, стр. 84.

39 Н. Г. Корсун, Военный обзор персидского-передового театра, Тифлис, 1909, стр. 114

40 ЦГВИА, ф. 76, д. 213, л. 1.

41 A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, Loudon, 1953, p. 154.

ոանկարը և գերադասում էին իրերի նախկին վիճակը[42]։ Այդ նախագիծը, իհարկե, չկիրառվեց կյանքում։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, եթե սկզբում թիուլը իրենից ներկայացնում էր վարչական, զինվորական կամ այլ ծառայությունների դիմաց հողից ստացվող եկամուտը դանձելու պայմանական իրավունք, ապա հետագայում թիուլը վերածվեց հողի պայմանական տիրման իրավունքի՝ պետական հարկերի պարտադիր վճարման պայմանով։ XIX դարի վերջին վերանում է նաև թիուլային հողերի տիրման պայմանականությունը, թիուլդարները հրաժարվում են ընդհանրապես իրենց պարտականությունները կատարել պետության նկատմամբ։ Իսկ դարավերջին և XX դարի սկզբին ժառանգական թիուլը արդեն դառնում է ընդունված ձև և թիուլդարները վերածվում են փաստական հողատերերի։ Իրերի փոփոխման այդ փաստական վիճակը իր իրավական արտացոլումը գտավ հետագայի քաղաքացիական օրենսգրքում։

Այսպիսով, խալիսե հողերի վաճառքը կամ թիուլային հողերի յուրացումը այնպիսի չափեր ընդունեց, որ խալիսեի ֆոնդը հասավ մինչև ամբողջ մշակելի հողերի 4 տոկոսի։ Այդ նույն պրոցեսի մասին է խոսում նաև Լամբտոնը, որը վերլուծելով խալիսե հողերը վաճառելու և յուրացնելու պատմությունը, գալիս է այն եզրակացության, որ «այդ ժամանակաշրջանի ընդհանուր տենդենցը խալիսեն վաճառքով և որոշ դեպքերում նաև ուզուրպացիայով մասնավոր սեփականության վերածելն էր»[43]։

Նշանակում է մասնավոր հողատիրությունը կամ մյուլքադարությունը աճում էր հիմնականում խալիսեի և վակֆային հողատիրության հաշվին։ Հատկապես 80-ական թվականներին խալիսե հողերի վաճառքից հետո արբաբի կալվածատիրությունը նշանակալից չափով աճեց, այնպես որ աղբյուրների վկայությամբ եթե 70—80-ական թվականներին արբաբի հողերը դեռևս ամբողջ հողատիրության մեջ մեծամասնություն չէին կազմում, ապա XX դարի սկզբներին դրանք արդեն հողատիրության գերիշխող ձևն էին։

Իրանի հասարակական կյանքում առաջացած առաջավոր գաղափարները չէին կարող չշոշափել երկրի կյանքում կարևոր նշանակություն ունեցող ագրարային հարցը, այդ թվում և պետական հողերի հարցը։ Այդ խնդրին մենք այստեղ մանրամասն չենք անդրադառնա, միայն նշենք, որ Իրանի խոշորագույն լուսավորիչ, դիվանագետ, հրապարակախոս հայազգի Մալքոմը իր «Դավթարև թանզիմաթ» գրքում գտնում էր, որ խալիսե հողերը պետք է վաճառել գյուղացիներին և ոչ թե կալվածատերերին։ Նա առաջարկում էր, որ խալիսե հողերի վաճառքից ստացված գումարներից կես միլիոնը հատկացվի առևտրի մինիստրությանը՝ «Ազգային բանկ» հիմնադրելու համար[44]։

* * *

Ամփոփելով մեր հոդվածը, կարելի է նշել, որ խալիսե հողերը սկսած XIX դարի երկրորդ կեսից կորցրեցին իրենց նշանակությունը։ Դարավերջին

[42] АВПР, Главный Архив, V, Аз. дел. № 19, л. 81.

[43] A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 152.

[44] فریدون آدمیت فکر آزادی و مقدمه نهضت مشروطیت ایران تهران ۱۹۶۱ صفحه ۱۳۵

տարբեր ժամանակներում և տարբեր եղանակներով բռնագրավված և պետական հողերի ֆոնդը մտած հսկայական տարածություններ ընդգրկող խալիսե հողերը անցան կալվածատերերի ձեռքը։ Հատկապես Նասր էդ Դին շահի թագավորության տասը տարիների ընթացքում մեծ քանակությամբ խալիսեներ վաճառվեցին։

Ադրբեջանում, օրինակ, XX դարի սկզբներին խալիսե հողերը կազմում էին ամբողջ մշակելի հողերի 8—9 տոկոսը, խալիսե կալվածքներից մնացել էին ընդամենը 1345 գյուղ ամբողջ երկրում[45]։

Մի կողմից առանձին մնծահարուստներ, օգտագործելով կենտրոնական իշխանության թուլությունը, յուրացնում էին ընդարձակ պետական կալվածքներ, իսկ մյուս կողմից ինքը պետությունը խոշոր գումարների կարիք զգալով վաճառում էր կալվածքները առանձին մարդկանց ու վերածում դրանք մասնավոր սեփականության։

---

45 مسعود کیهان... صفحه ۱۳۸